

ՏԱԶԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՑԵՕՐԷՆ-ԽՄՐԱԳԻՐ
ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՉԻԻՐԵԱՆ

Բ ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 6 ՕԳՈՍՏՈՍ 1911

ԹԻԻ 30

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- | | |
|---|-----------------------|
| ՊԱՏԱՆՔԷ ԹԱՇԿԵՆԱԿԸ. | ՍՈՒՐԷՆ Ս. Վ. ԳԱԼԷՄԵԱՆ |
| ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ Ժ.Բ. ՄԱՐԳԱՐԷԿՅ. — Ամովս (Ա.) | ԳԵՌՐԳ ՄԵՍՐՈՊ |
| ԿԱՆԱՆԶ ՏԵՐԵԻՆԵՐ (ՔԵՐԹՈՒՆԾ) | ԳՊՐԵՎԱՆՔՅԻ |
| ՀՈԳԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ. — Հոգեպաշտութիւն եւ նիւթապաշտութիւն դէմ դիմաց (Գ.) | ԳՐ. ԷՕԼՄԷՋԵԱՆ |
| ԹԵԼԱԴՐԻԶ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ. — «Ոգելից քմպեւիլի իւրաքանչիւր գաւաթին մէջ մայրս կը տեսնէի»: | ԳՐԻԳՈՐԻՍ |
| ՅՈՒԼԻՈՍ ԵՒ ՊԱՄՓՐԼԻՈՍ. — Առաջին Գըիստքնեաները ժամանակուան պատմութիւն (Շար.) | ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ |
| Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ Ինգամեայ տեղեկագիրը | ԽՄԲ. |
| ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան կարեւոր լուրեր | |

«ՏԱԶԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է շինուի առ Զարմայր Քահանայ Կեղիւհեան, Կ. Պոլիս, Պեթկըաւ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمنى كليسا سنده «داجار» غزنىسى مديرى پاپاس زارماير افندى
Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոստի եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրու
Արտասահմանի համար	» 10 ֆրանկ:
Ռուսիա	» 4 ռուբլի.
Ամերիկա	» 2 օսլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Հինգ բաժանորդ զսնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու:

ԲԱԺԱՆ ՈՐԴԱԳԻՆՆԵՐ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԵԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ԿՂԸՆԴՈՒՆՈՒՄՆԵՐ ԴԻՒՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈՂԻՍ. — Առաջն. Փոխա-

նորդ Տ. Արաքէն Քհնյ. Դերձակեան

ՄԱՅԻՔԱՆԴՐԱՆԴՐԱՆ. — Տ. Ռուբէն Քհնյ. Դա-

րիկեան

ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-

ղոս Վրդ. Դաթիթեան

ԱՅՆԹԱՊ. — Տ. Դարեգէն Քհնյ. Պողար-

եան

ԱՅԻՕՆ ԳԱՐԱՋԻՍԱՐ. — Տ. Խաչատուր

Ա. Քհնյ. Տօնէլեան

ԲԱՐԵՐԴ. — Մ. Սանտեան էֆ.

ԴԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եպս.

Կիւլէսէրեան

ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Քհնյ. Սար-

դիսեան

ԵՕՁՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վրդ.

Դիմաքեան

ԵՐՁՆԿԱ. — Տ. Մարոսի Քհնյ. Թորոսեան

ՉՄԻՒՈՆԻԱ. — Տ. Յարութիւն Քհնյ. Տ.

Սաքսեան

ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Դալուստ Քհնյ. Տ.

Դալուստեան

ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.

Սաատէթեան

ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թորոսեան

ԿԻՒՄԻՒԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Քհնյ.

Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Քհնյ. Վարժա-

պեան

ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան

ՆԻԿՈՄԻՒՄԱ. — Տ. Ոսկի Քհնյ. Պիպեան

Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Քհնյ.

Տառեան

ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Քէհեան

ՊԱՏՐԱՐԱՆ. — ՊԱՂԵՔԱՐԱՆ. — Առաջնորդ Տ.

Կարապետ Եպիսկ. Մաղլումեան

ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.

Եպիսկ. Կէօմարիւքեան

ՌԱՅԻՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Քհնյ. Մըր-

նիկեան

ՌՈՏՈՍԹՈ. — Առաջնորդ. Տ. Դէորդ Մ.

Վրդ. Աւրանեան

ՍԱՄՍՈՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Մ. Վ.

Օտապաշեան

ՄԵՐԱՍԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.

Թէոփիլէ Քհնյ Օտապաշեան.

ՍԵՂԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-

պետ Քհնյ. Թուխմանեան

ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Քհնյ. Տրէդ-

եան

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-

եան

ՏԻՄԷԹՈԳԱ. — Տ. Դէորդ Քհնյ. Թէրզեան.

ՓԱՐԻՉ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-

պուհ Քհնյ. Բիպարեան

ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.

ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Քհնյ. Դերձակեան.

ՖՐԷՋՈ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 6 ՕԳՈՍՏՈՍ 1911

ԹԻԻ 30

ԹԱՇԿԻՆԱԿԷ ՊԱՏԱՆՔԸ

ՍՐՏԱՃԱՄԻԿԻ ՏԵՍԱՐԱՆ

«Արցունքս ցուր, սա՛ թաշկինակս
ալ պատանք, սէրս, յիշատակս ալ՝
խունկ քեզի:»

Գիշեր էր... Ու տակաւին իրենց սիրե-
լիները կը սպասէին անհամբեր:

Երկու օրէ ի վեր մեկնած էին այդ զը-
րացի չորս երեսասարգները՝ հողային խնդ-
րոյ առթիւ գէպի Մուշ, խոստանալով շուտ
վերադառնալ իրենց ընտանեկան բոյնը. եւ
կ'ուշանային...:

Չորսին ալ ծերուկ մայրերը, որոնք
այս արիւնհոտ երկրին մէջ, իրենց տա-
րիքին բերմամբ, չա՛տ բաներ տեսած ու
անցուցած էին, տանիքի մը վրայ հաւաք-
ուած՝ թէեւ ամէն վտանգ կը գուշակէին,
բայց մայրական զգացումը հեռի կը վա-
նէր իրենցմէ ամէն կասկած ու սարսափ:
Այսպէս ժամեր շարունակ, տխուր ու զը-
ւարթ, յուսահատ ու յուսալից խօսքերով
իրար կը միմիջարեն, եւ սակայն հակա-
ռակ իրենց կամքին ու զգացման, գիշեր-
ուան տխրազգեցիկ մթնոթեան մէջէն,

կարծես Գուրդին ետքադանը իրենց լու-
սաքաղ աչաց առջեւ կը փալփի ու կ'ան-
հետի շարունակ: Տարիի հանգոյն ժամերը
կ'անցնին, կ'երթան ասուպի պէս, ու ի-
րենց ճամբորդները չեն երեւիր...:

Ո՛չ մէկ ձայն, ո՛չ մէկ շշուկ, ո՛չ մէկ
լոյս, կը սպասեն ու կը սպասեն... Բայց
ո՛ւր են իրենց ճիւղան զաւակները... Ու-
շացա՛ն, չեն գար...:

Գիշերուան անթափանցելի խաւարով,
ծառերով ու ճիւղերով շրջապատուած
գիւղին մէջէն արձագանգած ամենաշնչին
ձայն մը, իսկոյն յոյսի նշույլ մը կը ծնցնէ
իրենց մէջ: Լո՛ւ ու են ահա, քունէն ու մը-
տածումէն յոգնած զլուխնին վեր բարձ-
րացուցած՝ ականջ կուտան, բայց ի գո՛ւր,
պատրանք է եղեր, արեւելեան գիշերային
սիրտ բզբտո՞ղ պատրանք:

Ո՛չ մէկ ձայն, ո՛չ մէկ շշուկ, ո՛չ մէկ
լոյս... կը սպասեն ու կը սպասեն... Ո՛ւր
են իրենց ճան զաւակները... ուշացա՛ն,
չեն գար...:

Ծնողական խանդավառ զգացումը կը
յուսամբնէ գիրենք: Ճամբորդութեան ժա-
մանակ ուշանալու նման պարագաներ կը
պատմեն իրարու. անտեղի կասկածներու
եւթը կը կանխատեսեն յուսադրիչ բառե-

րով, եւ ահա գիւղի մէկ անկիւնէն՝ շունի հաչիւնը, ձիի մը խնայիւնը կամ կովի մը բառաչիւնը դարձեալ թունդ կը հանէ իւրենց սիրտերը: Գիւղերու մէջ, գիշեր ատեն մանաւանդ, չորքոտանիներու այս ձայները ազդարար նշան կը նկատուին ճամբորդներու գալուստի: Դարձեալ կ'ընդհատի խօսակցութիւնը, միահամուռ կը բռնեն իրենց շունչը, կը սրեն լսելիքնին, ոտքի ձայն մը լսելու համար: Բայց ի դժուար, խաւարը համատարած է, եւ գիշերային լուծիւնը միապաղաղ:

Ո՛չ մէկ ձայն, ո՛չ մէկ շարժում, ո՛չ մէկ յոյս... կը սպասեն ու կը սպասեն... Բայց ո՛ւր են իրենց եղջան զաւակները, ուշացան չեն գար...:

Երգիքին վրայ են սակաւին, կասկածը հետզհետէ իրականութեան կը փոխուի կարծես, միտքերը կսկծեցուցիչ խորհուրդներով կը խաչատուին, սիրտերը կը ճմլուին, հոգիները կը վրդովուին, ու իրենց բովանդակ էութիւնը աննկարագրելի տրտուութեամբ կը համակուի: Հոգեբանական քսամեցուցիչ ու անգնեղի՛ վիճակ, մայրական սիրտ սւ գուրգուրանք, եւ մանաւանդ սէր, որուն առջեւ տեղի կուտայ ամէն ինչ:

Սե՛ղճ պառաւներ... այս անգամ ոստ-վերուն կը գիմեն, հասկնալու համար իրենց ճամբորդներուն անվտանգ ժամանումը: Անոնցմէ մին փայլուն ասաղ մը ցոյց տալով, իր զաւակին ասաղը կը կոչէ զայն, ու աղկէ կը հետեցնէ իր սրբուրդն ողջ վերձագարձը: Միւսը չորս փայլուն ասաղերու հաւաքոյթէ մը, չորսերուն ողջ ժամանումը կ'ենթադրէ: Ուրիշ մը Յարդ-գողը մատնանշելով, անփորձ ու խաղաղ ճամբորդութիւն մը կը դուշակէ: Բայց սպասումը ինչ անհատնում վայրկեաններ ինչ սրտառուչ եւ մխիթարական գուշակութիւններ ասաղերու վրայ, որոնցմէ սփոխանքի եւ յոյսի ո՛չ մէկ նշոյլ չի ճաճանչիր: Ի դժուար ամէն ինչ: Ասաղերը հոն, վերը, երկնակամարին վրայ առկախ կը դիտեն ու կը զմայլին, կը փայլեն ու կը կարմրին:

Ասաղերէն ալ ո՛չ մէկ ձայն, ո՛չ մէկ

խօսք, ո՛չ մէկ յոյս. կը սպասեն ու կը սպասեն: Բայց ո՛ւր են իրենց ճիւղան զաւակները: Ուշացան, չեն գար...

Ա՛յ կը վերջանայ ամէն ինչ, ա՛յ կը յուսահատին բոլորովին, ա՛յ կը սպառն սպասումի փափաքն ու թափը: Գիշերը իր սեւ վերմակին տակ կը ծածկէ ամէն ինչ: Լուծիւնը, դժոխային լուծիւնը աւելի եւս կը տիրապետէ ամէն կողմ, ու այդ ներդաշնակ լուծիւնը սիրտերու արագ ու ուժգին զարկն ու արթնութեն միայն կը խանգարուի երբեմն: Ի՛նչ առաջ յուսադրիչ բառեր արտասանող բերանները կը չղթայուին, չըմենք կ'անշարժանան ու լիզուները կը կարկա՛մին: Աչքերը միայն չեն դադրիր արտասուելէ, կուլտն, անընդհատ աղի արցունք կը թափեն անոնք լըռիկ ու մեջիկ:

Մեծ լացին նախատնակը կը հլատարեն: Ու այս լացի հիծկտուքներուն հետ մերթ ընդ մերթ աղօթքի բառեր կը մըթմըթան իրենց Աստուծոն ու զոլուած: Մայրերու վերջին ապաստանարանն էր Ան, Անկէ կը սպասեն իրենց զաւակներու վերադարձը. կ'ողբան ու կը պաղատին: Բայց պարա՛պ, ամէն ինչ պարա՛պ...

Ու այսպէս մինչեւ առաւօտ. կը յուսան, կուլան, եւ կը սպասեն ու կը սպասեն... Բայց ո՛ւր են իրենց ճանձիւղան զաւակները... առաւօտ եղաւ, ուշացան ու չեն գար...

Արշալոյսին, ո՛հ, դժխեմ ու արիւնոտ արշալոյս, միեւնոյն յարկին տակ, ուր չորս երիտասարդներու կիները հաւաքուած եւ գիշերնի բռն, առ ի համեստութեան, լուռ արցունք թափած էին, յանկարծ կը պատռեն համեստութեան քողը եւ ուժգին ճիւղի կ'արձակեն: Իրենց սիրելիներու խող-խողման լուրը տոած էին... Ողբալի պառաւները կը ցնցուին խկոյն, վայր կը խուժեն ամէնքն ալ, ու այնքան սրտմաշուք սպասումէ մը վերջը, եղբրական իրականութեան մը առջեւ կը գտնեն ինքըզիքնին: Սպասուած ճիւղաները, գիշերուան մէջ իրենց աչքին առջեւ պատկե-րացող Բուրդի եւրապանին զոհը եղած էին...

Քոստանեցուցիչ պատկեր... Արտաճմիկի տեսարան...

Հեռու էր ոճրագործութեան վայրը գիւղէն. չորս մայրերուն համար անկարելի էր երթալ. անակնկալ բոթը պարսաւսած, զգեստնած էր զանոնք, կենդանութեան ոչ մէկ հետք կը տեսնուէր անոնց վրայ. եւ սակայն պէտք էր վերջին յարգանք մը մատուցանել իրենց սիրելիներուն, որովհետեւ գիտնէր իրենց պիտի փոխադրուէին Այս նուիրական պարտականութիւնը կատարելու թոյլտուութիւն կը տրուի նաեւ հարսերուն:

Ահ, ո՛ր եւ, Աստուած իմ. «լիւններն սւ քարերը, ժայռերն ու բոյսերը ողբ ու արցունք կտրած էին», ինչպէս կ'ըսէր բարեկամներէս մին, որ պատահմամբ ներկայ եղած էր այդ տխուր վայրը, ու ակնհասեա՛ սրտաճմիկ տեսարաններուն:

Երկուստարգուհիները, ինկած իրենց սիրելիներու խոզթորէն բլբլտուած գիւղներուն վրայ, երկինք սարսող ճիւղեր կ'արձակէին: Անոնցմէ մին իր ամուսնոյն մարմինէն բաժնուած զուլիւր վիզին կը կըպցընէ, կտրուած թւերը իրարու քով կը դնէ, ու սիրտ բզբռող ձայնով մը կը գոչէ:

— Ելի՛ր, երթանք, մայրդ քեզ կը սպասէ:

Միւս երկուքը իրենց ամուսնոյն գիւղները գրկած, անոնց գլխու մաշկը շոյելով, ողբեր կը հիւսեն, եւ միաբերան կը հարցնեն գիտնէրուն՝

— Դե՛հ, խօսեցէ՛ք, ի՞նչ ըսենք մայրերնուդ եւ ճըմերնուդ, ի՞նչ ճողապ տանինք. անոնք ձեզի կը սպասեն:

Զորբորդ կինը — միջնակարգ դպրոցէ չրջանաւարտ — մանկամարդ ու տակաւին նոր ամուսնացած, իր նոճեհասակ ամուսնոյն (միւսնոյն օրը սպաննուած Տէր Սարգիս քահանայի միամօր որդին) արիւննազանգ գիւղին վրայ փռուած՝ ժամեր կը մնայ, առանց մէկ բառ արտասանելու: Ոտքի կը կանգնի իսկոյն Ամէնէն աւելի սուկալիօրէն անդամատուած իր ամուսնոյն գիւղի մասերը կ'արողջացնէ, կը կանգնի անոր առջեւ, նշանի օրհնուած մատանին կը փնտռէ, չի գտներ... ու սա՛ սրտաճմիկ

ու կցկտուր խօսքերը կ'արտասանէ.

— Հա՛, քովդ եմ հիմակ, բա՛ց աչքդ, անգամ մը, տե՛ս... Ծատ սպասեցի, չեկար, ու ես եկայ վերջին միւս բարովը ըսելու: Հայրդ ալ սպաննած էն, չկայ ան, բայց ինչ ճողապ տանիմ մօրդ, ի՞նչ ըսեմ մէկ հատիկ Ծուշանիդ: Ա՛խ, քեզի շատ տեսան Քուրդերը, Բայց ես քուկդ եմ մինչեւ գերեզման: Մարիամ Աստուածածնի պէս եկայ, պիտի լուամ, պատանքեմ քեզի, արցունքս ջուր, սա՛ քնշիկնակա ալ (երեւիս վրայ ձգելով) պատահ. սէրս ու յիշատակա ալ խուռնի քեզի: Ո՛ր կերթաս... մի՛ թողուք, չերթայ, մի թողուք: Ան իմ է, Աստուած տուաւ ինձի: Ահ, ինձի շատ տեսան քեզի: Աստուած, ո՛ր եւ, պատժէ՛ դահիճները: Ո՛ր է մատանիդ, փնտռեցի չգտայ, կը խենթանամ, ա՛խ... ես կ'ուզէի որ այդ մատանին հետս գերեզման տանէի. ա՛ն ալ շատ տեսան քեզի: Զիս ալ հետդ թող թաղին, թաղեցէք զիս ալ, ինչո՛ւ կեցած էք. մի՛ լաք, թաղեցէք...:

Ու կ'իջնայ շնչասպառ, հազիւ կը սթափեցնեն զինքը, ու կը դիմեն դէպի գիւղ: Քիչ մը հեռացած, ետ կը դառնայ դարձեալ, քանի մը մազ կը փրցնէ ամուսնոյն գլխէն, եւ կ'ըսէ.

— Յիշտուտկ մը առի քեզմէ, դուն ալ սա՛ իմ մաղերէս առ:

Ու կը սկսի փռնել փռնել փնտռել գլխուն մազերը՝ կատարեալ խելագար մը դարձած, ու անոնմով ծածկել իր անշնչացած ամուսնոյն անձանաչելիօրէն յոշոտուած գիւղը...

ՍՈՒՐԷՆ Ծ. ՎԱՐԴ. ԳԱԼԵՄԵԱՆ

Բաղեշ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻԵՆԸ ԶՍԲՈՆԻ ՄԷՋ.

— Վերջին վիճակագրութեանց համաձայն Ճարտնի մէջ 168,000 Գիտտոնեայ կը գտնուի, 74500ը Բողոքական, 63,000ը Կաթոլիկ, 30,700ը Յայն Օրթօքսոքս: 87000 Ճարտնիներ կիրականորեայ դպրոց կը յաճախեն Նորածագ Արեւու կայսրութեան մէջ: Պաշտօնապէս Քրիստոնեայ արձանագրուողներէն զուրս, բազմաթիւ Ճարտնիներ ալ կան որ Աւետարանի սկզբունքներուն հակառակ են, առանց այս կամ այն Եկեղեցիին յարելու որոշում տալ կարենալու:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆԵՐԿՈՒ ՄԱՐԳԱՐԷԻՑ

Նրեհաբբի օրը Հայ Եկեղեցին կայսրեց երկաստան մարգարեից յիշատակը: Առիթը նպաստաւոր կը համարենք, ուրեմն, սկսելու հրատարակութիւնը քերթիս հրմուտ աշխատակից Տիար Դեռոգ Մեսրոպի գրած ճեղքածական ուսումնասիրութիւնը՝ նոյն ժ. մարգարեներուն վրայ, որ ապահով ենք քե այնքան օգտիւ եւ հետաքրքրութեամբ պիտի կարդացուի, որքան հետաքրքրութեամբ կարդացուեցաւ հեղինակին նախորդ հրմուտից ուսումնասիրութիւնը, երայական մարգարեութեան ծագման վրայ:

Ա Մ Ո Վ Ս

Ամովս եւ իր ժամանակը. — Խմբագրութեան
Թուականը. — Բովանդակութիւնը. — Երկու
կու իշխանութիւններ. — Ոճը:

Քրիստոսէ առաջ ութերորդ դարուն վերջին քառորդին կիսուն էր (790-785), Բեթէլի, Իսրայէլեան հարստութեան այն սրբազան քաղաքին մէջ մեծ ոգեւորութիւն կը տիրէր: Եփրեմեան իշխանութեան ամէն սահմաններէն ուխտաւորներու անթիւ բազմութիւններ եկած խոնուած էին հոն: Եանվէի անուանը նուիրուած Սողոմոնեան տաճարին նման տաճարներ՝ սեղաններ(1) կային, ուր Սիրոնի հետ կրօնական կապակցութենէ բաժնուած բազմութիւն մը եկած էր իր զոհերն ու նուէրները մատուցանելու, իր տասնորդները բերելու(2), իր տարեկան ողջակէշներն ու պարարտ անասնոց խաղաղութեան զոհերը նուիրելու(3), եւ տօներ ու հանդէսներ սարքելու(4):

Այդ նշանաւոր քաղաքին մէջ, Բահադի կամ Բահադիմուանց սեղաններուն մօտիկ, կանգնած էր Եանվէի անուանը նուիրուած

այն տաճարը, որուն մէջ պիտի կատարուէին այդ բոլոր զոհերն ու զենուկները, եւ զոր կը կոչէին « Սրբութիւն թագաւորի », « Թագաւորական կամ պետական տաճար »(1): Փիւնիկեան կրօնքին ազդեցութեան տակ, Աքաաբու եւ Յեզաբէլի խնէշ կայթուէններու կաքաւներն ու ցոփ քրմութեան մը սարքած պարերը(2) խառնուած էին Յուդայի սահմաններուն մէջ պաշտուած Եանվէի պարզ պաշտամունքին: Եանվէն ազգային միութեան միակ խորհրդանշանն էր, ազգային Աստուծոն էր, ինչպէս Հրէաստանի նոյնպէս Սամարիոյ բնակիչներուն վրայ: Եւ սակայն, « Յովակիմի տան »ը (3) այլասերած սերունդին մէջ, Սիրոնի բարձունքներուն վրայ յայտնուած Աստուծոյն պաշտամունքն ալ այլանկարած, կերպարանափոխ եղած էր: Ի՞նչ փոյթ սակայն: Իսրայէլեան հարստութեան պետերուն համար քաղաքական թաքուն նպատակներու գործիք մը եղած էր կրօնն ու պաշտամունքը: Դէպի Դաղգաղայի, Բեթէլի, Սեղովի, Բերսաբէի(4) սրբարաններն ուղղուած կրօնական ուխտաւորութիւնները, կրօնական բոլոր խրախուսիչները ժողովուրդին կենսական պէտքերը դարձած էին, երբ մանաւանդ հարկ էր մոռնալ ու մոռցնել Երուսաղէմն ու իր տաճարը (5): Եւ Սեղովը, Դաղգաղան ու Բեթէլը մանաւանդ յոյժ նպատակայարմար վայրեր էին, քանի որ Յակոբի որդիները՝ Եանվէն Սիրոնի վրայ չպաշտած, պաշտած էին զայն այդ սրբարաններուն մէջ: Բեթէլ կրկնապէս յիշատակելի ու սրբազան վայր մըն էր արշարիւ Իսրայէլի զուակներուն: Հոն չէ՞ր որ Յակոբ, Իսրայէլեան նահապետական կեանքի ամենէն կարկաճուն քիփը, իր տեսիլը տեսած, երկնքի ու երկրի միջեւ ձգուած երկնային սանդուղը տեսած էր: « Երկնքի դուռը » հոն՝ Բեթէլի մէջ չէ՞ր միթէ (6): Հոն՝ Բեթէլի մէջ եղած

(1) Ամովս. Գ. 14, Թ. 1:

(2) " Գ. 4

(3) " Ե. 22

(4) " Ե. 21, Ը. 10:

(1) Ամովս. Է. 13

(2) Գ. Թագ. ԺԸ. 26-28, Ամովս 2. 5,

(3) Տե՛ս Ամովս Ե. 6. (2) Ժանոն:

(4) Ամովս Ե. 4., Գ. 4

(5) Գ. Թագ. ԺԲ. 27

(6) Եննդ. ԻԸ. 10-19

չէ՛ր նաեւ. Եահվէի Տապանակին հանգիստը (1), նոյնիսկ Սամուէլի ժամանակ (2): Այս տրամաբանութիւնով էր, անշուշտ, որ Յերոբովամ Ա.ի ոսկի հորթն ալ, իբրեւ խորհրդանշան անապատի աստուծոյն, իր գոյութեան իրաւունքը կ'ունենայ Բեթէլի սրբարաններուն մէջ (3): Այսպէս, ուրեմն, անցեալի սրբազան յիշատակները միանալով նոր ու գուհիի ծիսականութեան մը հետ, Եփրեմեան ժողովուրդներու համար հրապուրիչ խայծ մը կ'ըլլային զէպի Բեթէլ ատաշնորդելու համար զանոնք: Եւ Յերոբովամն ու իր յաջորդները գիտէին քաջալերել այս ձգտումը իրենց ներկայութիւնով: Եւ չլացուցիչ ծիսականութեամբը (4): Տարակոյս չկայ թէ կրօնական այս ոգեւորութեան, ինչոյնքներու, ցայգատուներու, մեղկ ու վաւաշոտ հանդէսներու ծարաւը աւելի բուռն համեմատութիւն մը կը ստանար, Իսրայէլեան հարստութեան՝ չըջակայ ազգերուն վրայ ունեցած յաշտութիւններով: Երկիր մը երբ քաղաքական եւ առեւտրական բարգաւաճ ընթացք մը կ'առնէր, անոր հետ մէկտեղ գուզնութեցաբար կը մտնէր մեղկութեան, շոյալութեան ու մինչեւ իսկ անբարոյութեան ճամբուն մէջ: Այս էր հնութեան մէջ բուսած ու ծաղկած բոլոր պետութիւններուն ալ ճակատագիրը: Եփրեմեան իշխանութիւնն ալ, իր կրօնական ու ընկերային հաստատութիւններով, սովորութիւններով ու բարքերով, տարբեր բախտի մը արժանացած չէր կրնար ըլլալ: Յերոբովամ Բ.ի ժամանակ, երբ Դանի ու Սամարիոյ զինուորները մեծ յաջողութիւններով կը պնդեցին չըջակայ փոքր պետութիւններու երկիրներուն մէջ (5), ամէնէն աւելի մեղկ, շոյալ, ցոփ ու զբօսասէր յատկութիւններով կը փայլէին Իսրայէլի տասնցեղերու ժողովուրդները (6):

Ահա, Յերոբովամ Բ.ի թաղաւորութեան

վերջին տարիներէն մէկն էր, երբ Իսրայէլի ժողովուրդները, յագուրդ տալու համար իրենց այդ ցոփ, զբօսասէր ու շոյալ կեանքին, եկած ժողովուած էին Բեթէլի սրբարաններուն մէջ: Կրօնական ծէսերու եւ տարագներու երկնեան գութեան մէջ, ցեղային տարազներու եւ հաւատաւորներու այլազանութեան խառնուրդ մը զանգուած, կրօնային կատարեալ եռուղեքի մը փոխած էր բովանդակ քաղաքը: Հոս, Բաշ հաղի պատկերին ու քուրմերուն առջեւ, որոնք իրենց յափշտակութեան ու կաքաւներուն մէջ՝ դանակներ՝ զեղարգներ կը շողացնէին իրենց կիտամերկ մարմիններուն վրայ (1), զգլխած բազմութիւն մը կը խոնարհեցնէ իր ճակատը: Հո՛ն, ոսկի հորթի մը առջեւ, սրինգներու, տաւիղներու, նուագերգութեան մը ու կայթուհիներու լպիրշ կաղկանձումներուն ու խննէչ պարերգներուն հանդէպ զինովցած՝ զինի փսխող բազմութիւն մը կը ցատկըռտէ (2): Անդին Եահվէի անուանը նուիրուած սեղանի մը առջեւ, այլասերած քրմապետի մը՝ Ամասիայի հրամանին տակ, ճերմակներ հագած կեղծ Ղեւաացիներու խումբեր կը բզզան, որոնց ատաշնորդութեամբը ողջակէզներու զէպի երկինք բարձրացող ճենճերներուն ի տես անթիւ բազմութիւն մը կը կայտուէ: Ամէն տեղ ոգեւորութիւն, ամէն տեղ պար ու խինդ, ամէն տեղ երգ ու ընար:

Յանկարծ իրարանցում մը: Վախասուն, գոռում, գոչում, ձեռքեր կը բարձրանան զէպի վեր: Տաճարը կը պարպուի, քուրմերը կ'ապշին: Արարողութիւնները աւարտած էին արդէն: Քուրմերը դուրս կը նետուին: Ի՞նչ պատահած էր, ի՞նչ կարարեօք: Դուրսը՝ հեռուն, տաճարի հրապարակին մէկ ծայրը, հո՛ն կը զիմէր բազմութիւնը: Ակռաները կը ճտեղծուէր, բարկութեամբ կը վազեն ամէնքն ալ: Ի՞նչ կար սակայն հոն, կարծես մագնիսական հոսանքէ մը ազդուած, վազողները կը կենային, բարկացածները կը հանդարտէին:

(1) Դատ. Ի. 26,

(2) Ա. Թագ. Ժ 3. է, 16:

(3) Դ. Թագ. ԺԲ. 25-33

(4) Դ. Թագ. ԺԲ. 32, 33:

(5) Դ. Թագ. ԺԴ. 25-27, Ամովս Ը. 14

(6) Ամովս 2. 4-7:

(1) Դ. Թագ. ԺԸ. 28

(2) Ամովս 2. 5, Ես. Ե. 12

«Խենդը, տեսանողը» կը գոչէին ոմանք հեռանալով. «բաշուելիք բան չէ» կը գոչէին ուրիշներ. «խրաւունք ունի» կը պօռային չատեր:

«Թեկուացի Տեսանողն» էր ան: Պարզ հագուած մարդ մը, հովիւի ցուպ մը բռնած, իր բերնէն հուր կը ժայթքէր սակայն թաղաւորն ու իշխանները, պալատն ու պալատականները, սեղաններն ու քուրմերը, կուռքերն ու տաճարները, ամէնքն ալ իր բարկութեան ատարկաները դարձած էին «Յերոքովամ սրով վախճանեացի, կը գոչէր ան, եւ Խորայէլ գերելով գերեացի յերկրէ իւրմէ» (1): Ամասիա, Բեթէլի սեղանին քուրմը, ի զուր լուր զըրկած էր Յերոքովամի, Եանվէի «տեսանողը» կարկելու համար, ի զուր հրաման զրկած էր «տեսանող»ին՝ լուել իր այն չարաշուք գուշակութիւններէն: Օգուտ մը չէին ունեցած. մարդարէն աւելի եւս բորբոքած կը նետուէր փողոցները, հրապարակները, պարսպին զուռները, եւ ահ ու սարսափ կ'ազդէր տմենուրեք:

«Երբ առիւծը կը մռնէ, ո՞վ կրնայ ջարտուալ երբ Եանվէն կը խօսի, ո՞վ կրնայ ջարդարէանալ(2):»

Հիմակ ալ եկած էր Բեթէլեան տաճարին հրապարակը, իր մարգարէութիւնները գոռալու համար: Ա'լ քաւական էր, պէտք էր պապանքեցնել զայն: Ամասիա յառաջ կը նետուի: Բազմութիւնը անդի կուտայ յարգանք «Թագաւորական տաճար»ի Քրմապետին: Բարկութեամբ լեցուած է ան: Բայց հարկ էր չգրգռել ժողովուրդը, որուն մէջ «Տեսանող»ին համակիրներ ալ շատ կային անշուշտ Քմծիծաղ մը, ուրիշն, չրթունքին վրայ, հեղինակն ժպտաւ մը:

— Տեսանողդ, կը գոչէ Ամասիա, տուր անդի, գնա՛ յերկիրն Հրէաստանի, անդ կեաց եւ անդէն մարգարէաջրո: Ի Բեթէլ մի՛ եւս յաւելուցուս մարգարէանալ, զի սրբութիւն թաղաւորի է եւ տուն թագաւորութեան(3):

Ի՞նչ, Ամասիայի նման քուրմի մը

(1) Ամովս. է. 9, 11:

(2) Ամովս Գ. 8

(3) Ամովս. է. 12, 13:

սպառնալիքները կրնայի՞ն միթէ լռեցնել զայն, որ իր Տիրոջ՝ Եանվէին ձայնին անսալու համար, թողած էր իր հարսնիքն, ընտանիքն ու արջառնիքը, եւ եկած՝ Բեթէլի քուրմերուն անօրէնութիւնները նըշատեցնու:

Ո՛չ ոչ, կը պատասխանէ ան.

«Ես ոչ մարգարէ էի,

եւ ոչ որդի մարգարէի.

Այլ հովիւ արջառոց

եւ մոլածուղ քաղէի.

եւ ա՛ն զիս ցէր ի հօսից,

եւ ասէ ցիս, գնա՛ դու եւ մարգարաց

ի վերայ ժողովրդեան իմոմ Խարայէլ(1):»

— Արդ, դո՛ւն կ'ըլլաս ինծի հրամայողը որ չմարգարէանամ. գո՛ւ կ'ըլլաս արգելքը Եանվէի խորհուրդներուն իրագործման, անոր պարզ պաշտամունքին տարածման. լսէ ուրիշն Եանվէի պատգամը, որ շանթ մըն է քու գլխուդ:

«Կին քո ի քաղաքիդ պոռնկեսցի,

եւ ուստերք քո եւ դասերք քո ի սուր անկցին,

եւ երկիրդ լարաբաժին քաճանեսցի,

եւ դու յերկրի պղծում վախճանեսցիս,

եւ Խարայէլ գերելով գերեսցի յերկրէ իւրմէ»:(2)

Հաղիւ թէ պոռնկացող լաւայի պէս զուրս կը թափին այս բառերը, ահա ծանր ու շառաչող կոտի մը կը շաչէ մարդտրէին րեւին վրայ, ահուանիքը կոտրանալու աստիճան(3):

Այս յանգուգն մարգարէն կը կոչուէր
Մ.ՈՐԳ. ՄԵՍՐՈՊ

(Շարունակելի)

(1) Ամովս. է. 15

(2) Անդ. է. 17

(3) Նախնի մատենագիրներու մէջ աւանդումըն մը տարածուած էր Թէ Ամասիա՝ մարգարէին խօսքերուն վրայ քարկացած, ջախջախած էր անոր ակնները, եւ նայնիսկ ընդունողներ եղած են (Եպիփան, Խոզոր, Աբրեղ եւայլք) Թէ Ամասիայի որդին, Ովսէ կամ Ովսիա, հաստ գաւազանի հարուստով մը կոտրած է անոր բունքը, որուն վրայ Ամովս կրտամեռ ինկած ու իր հայրենիքը Թեկուա տարուելով, հոն մեռած պիտի ըլլայ: Տարակոյս չկայ Թէ Ամասիա եւ իրենները լուռ հանդիսատեսներու նման անտարբեր չէին կրնար մնացած ըլլալ մարգարէին այս շանթահարող խօսքերուն հանդէպ, բայց թուրքովին վաւերական ալ չի թուիր վերոյիշեալ մատենագրաց կարծիքը կամ յառաջ բերած աւանդումընը:

ԿԱՆԱՆՉ ՏԵՐԵՒՆԵՐ



քասիաներու խաղաղ շուքին տակ
Ջինջ նկարներ կան, տեսիլներ շքեղ:
Սիրտս դեռ կ'երթայ երազի մ'յստակ,
Որ տուաւ ինձի արցունքն ու գեղգեղ

Գողտրիկ տերեւ մ'էր վարդի մը փափուկ
Քնքուշ ձեռքէ մը արտիս գոգն ինկած,
Հագին շնչեցի բոյրն իր խուսափուկ.
Հոգիս հիացման գինովանքն զգաց:

Գարուններն ունին ծաղիկն ու տերեւ,
Գոհարն ու ոսկի Լուսնակն ու Արեւ,
Ու Արշալոյսը նարոտներ հագած:

Շաղերով օծուած ծաղիկներ բերէք,
Կանաչ տերեւ մը հոգւոյս քով դրէք.
Երբ վիշտը կ'երգեմ ու ցաւերուն կայծ:
ԴՊՐԵՎ ԱՆՔՑՎ

ՀՈԳԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆՆ

ՀՈԳԵՊԱՏՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԻԹԱՊԱՏՏՈՒԹԻՒՆ

Դ Է Մ Դ Ի Մ Ա Յ (1)

Գ.

Ֆլուրանսի ուրիշ մէկ փորձը.— Աղանձներու
ուղղակի (փոքր ուղեղ) հանուած.— Տէքստ-
դի, Պէրքլէյի եւ Քանդի փաստերը՝ ի նը-
պաստ հոգեպաշտութեան:

Դիտակցութեան վկայութիւնը.— Բաղդատական
քննութիւն «Ես» ի եւ նիւթի ստորոգելիք-
ներուն:

Նիւթապաշտներուն կողմէ վերջին ան-
գամ մէջ բերուած փորձերը Ֆլուրանսի
փորձերն են, որ՝ պէտք է չհշտել՝ նիւթա-
պաշտ չէր ինքն ալ: Անիկա առաջինը ե-
ղաւ որ բրաւ այն փորձը որ անկէ ետքը
կոչուեցաւ «Ուղեղային պաշտօններու վեր-
լուծումը» կատարուած ուղեղային զանա-
զան բլթակներու յապաւմամբ: Աղանձի-
ներու վրայ գործողութիւն կատարելով:

(1) Շարունակութիւն ՉՅրդ. Թիւն:

նա հաստատեց թէ ուղղակի (փոքր ու-
ղեղը) կանոնաւոր գործարանն է շարժու-
մին, թէ անոր ջնջումը յառաջ կը բերէ
անշարժութիւն, եւ թէ զանազան ձեւերով
փնտռելով, շարժումն ալ կը փոփոխէ
զանազան կերպով: Եթէ մէկ կողմէն վը-
նասուած է՝ անասունը չի կրնար ազատու-
րէ առնել իր թռիչքը, եւ երբ բարձրը
նետենք զայն, կը ստիպուի պարտութեւ
դատաւարու: Իսկ եթէ փնտռուած հակա-
դիր կողմը դառնուի, կենդանին հակառակ
կողմը կը դառնայ, եւ ո եւ է մասնակի
փնտռուած մը զայն անկարող կ'ընէ յա-
ռաջանալու: Գինովութիւնը ուրիշ բան չէ,
եթէ ոչ ուղեղի այս մասերուն մէջ արիւ-
նախանութ մը՝ յառաջ եկած ոգեկից ըմ-
պելիներու շոգիներէն:

Արդ, Ֆլուրանս հաստատեց նոյնպէս
թէ առաջադիր եւ վերին աստիճանի բըլ-
թակներն են որ կը ծառայեն մտքին: Երբ
այդ մասերը հանութիւն աղանձի են, ան կը
կորսնցնէ բնազդումը եւ զգայարանները,
չի կրնար ալեւս ուտել, ո'չ ալ փափաք
ու զաղափարը կ'ունենայ փախչելու.
այսուհանդերձ անդառական ու շարժիչ
պաշտօնները անվթար կը մնան, եւ սը-
նընդառութեան շնորհիւ գործարանը կը
վերակազմուի ու բնազդը կը վերերեւի,
երբ խնդրոյ առարկայ բլթակները ձեւա-
կերպուած են վերստին:

Ահա՛ հոն է նիւթապաշտներուն յաղ-
թանակը: «Չէ՛ք տեսներ, կ'ըսեն անոնք,
թէ ուղեղին այսինչ մասին անբեւեռութա-
նալովը, այս ինչ կարողութիւններն ալ
կ'անբեւեռութեանն, թէ ուղեղը վերակազ-
մուելով զանոնք վերստին յառաջ կը բե-
րէ, եւ թէ՛ հետեւաբար՝ այս կարողու-
թիւնները, միայն ուղեղին ուղղակի ար-
գասիքներն են »:

Սակայն Ֆլուրանս ինքն ալ, եւ ուրիշ
բնախօսներ, իմաստասէրներ մասնաւոր
չեն վարանիր յարձակողականի սկսիլ սոյն
այս կէտին վրայ իսկ, տեսնելով մէջ բեր-
ուած իրողութիւններուն մէջ ամենայնատակ
ապացոյցը՝ ի նպաստ հոգեպաշտութեան:
Կարելի է, կ'ըսէ Ռավէսոն, աւելի լաւ կեր-
պով ցուցնել թէ միտքը յապաւուած չէր

իր գործարանին յապաւմամբը, այլ միայն պարզապէս պահուած էր, քանի որ կը սկսի երեւիլ երբ գործարանը կրկին շրմուած է իր տրամադրութեան տակ»:

Աւելին կայ, բլթակները ինչպէս պիտի վերաբուանէին կանոնաւորապէս, եթէ չըլլար ուղղիչ, վարիչ ուժ մը, պատրաստ գոգեհա՝ ընդունելու եւ կարգաւորելու սնունդառութեան միջոցաւ եկած հիւլէները, եւ եթէ հոգին հոն ներկայ չըլլար վնասներէն եւ վերապատրաստելու իր մարմինը: Հոգին անքան գերազանց է ջղային տարրերէ որ կը վերհսկէ անոնց վերակազմաւորութեան, եւ մինչեւ անոնց ամբողջական վերանորոգումը՝ բարձր կարգի պակսող մասերը կ'ամբողջացնէ գործարանին ստորին մասերով: «Ուրեմն գործալ անը չէ որ յառաջ կը բերէ պաշտօնը, ինչպէս կը պնդեն նիւթապաշտները, այլ պաշտօնը, գործողութիւնն է որ նիւթական կարգ մը պայմաններու տակ իրեն կ'ենթարկէ եւ կը յատկացնէ գործարանը»:

Այսպէս, երբ կէտ մը ստոյգ կ'երեւի, այդ պատճառաւ նիւթապաշտութիւնը իրաւունք չունի ինքզինք երեւցնելու որպէս գիտականօրէն հաստատուած. իր բոլոր փաստերը նուազ բաներ կ'ապացուցանեն, կամ թէ ուրիշ բաներ կը հաստատեն, որոնց ինք չի հաւատար: Իր փաստերէն ո'չ մէկը կ'ապացուցանէ այն զոր ինք առաջ կը քէ:

Հարցը գիտականօրէն լուծուած չէ, եւ ոչ ալ լուծուելու բնոյթն ունի, անիկա բնագիտական կարգէն է: Սակայն բոլոր քննականցական պատճառները եւ մասնաւոր քստոյական պատճառները, ինչպէս որ պիտի տեսնենք, հոգեպաշտութեան ի նպաստ են: Մտքին համար աւելի բուարար կ'ըլլայ միշտ ստորնագոյնը բացատրել գերագոյնով, քան հակառակն ընել: Գործարանաւորութիւնը միջոց մըն է հոգեբանական ու բարոյական կեանքին համար, որ մարդուն մէջ էական է: Այս վսեմ վախճանը կ'իշխէ ամբողջ գործին վրայ եւ զայն կը գնահատէ՝ առանց անոր պատահական արդիւնքն ըլլալու:

Եթէ ասկէ առաջ եղած վիճարանութեամբ բան մը հաստատուած է, եւ եթէ

պէտք ըլլայ յանգիլ դրական եզրակացութեան մը, մենք պիտի պարտաւորինք այդ եզրակացութիւնն ընել ոչ թէ ի նպաստ նիւթապաշտութեան, այլ՝ Լայպնիցի(1) հետ՝ ա'լ աւելի ի նպաստ քաջարձակ հոգեպաշտութեան: Այս անունը կը տրուի այն վարդապետութեան, որուն համեմատ նիւթը՝ նոյն իսկ խամ (brute) նիւթը կը փոխուի ինքնակամութեամբ եւ իմացալիպնութեամբ օժտուած աարածական եւ անխնայ տարրերու, կամ աւելի ճիշդը խօսելու համար հոգիներու: Այս արդէն հոգեկան՝ սակայն ստորին կարգի տարրերը որոնք կ'երեւին կենդանիներուն եւ մասնաւորապէս մարդուն վրայ, ի մի հաւաքուած, զաստուորուած եւ զոգցեա հրահանգուած են վերին աստիճանի, գիտակից, բանական եւ ազատ միոյթի մը ձեռքով որ բուն հոգին է՝ պատկերը գերազոյն միոյթին որ է Աստուած:

Մինչեւ հոս վանելով նիւթապաշտութեան յարձակումները, ցոյց տուինք թէ այս վարդապետութիւնը ո'րքան քիչ իրաւունք ունի ինքզինք ներկայացնելու իբրեւ դրական եւ իբրեւ իրողութիւններու վրայ հաստատուած միակ վարդապետութիւնը:

Նիւթը շատ հեռու ըլլալով պահանջ յարուցանելէ թէ ինքն է գերազանցորէն քուն իրականութիւնը, մի միակ իրականութիւնը, անոր պատկանած բանին մէջ մեծ դժուարութիւնը՝ անոր որոշ գոյութիւնը հաստատելն է, քանի որ վերջին վերլուծման մէջ անիկա կը փոխակերպի գիտական հանգումներու, մտքով միայն կը ճանչցուի, եւ մեզի համար գոյութիւն ունի միայն այն աստիճանը որ միտքը կ'ըմբռնէ զայն եւ կը ճանչնայ:

Հարկ է ուրեմն վերադառնալ այն հարցին որուն բացարձակ կարեւորութիւնը անհուն է: Պէտք է թողով յայտարարի երեւոյթը, ձեռք առնել նորէն նոյն իսկ հոգեպաշտական բնաբանը, եւ տեսնել թէ ինչ փաստեր կրնայ առաջ բերել ան իր կարգին:

(1) Մեծագոյն իմաստաւոր Գերմանացի (1846-1916), հեղինակ շատ մը գրութեան: Քանի մը լեզուով:

Եթէ ենթական՝ որ կը կամի, կը զգայ եւ կը խորհի, նոյն ինքն գործարանաւորութիւնը ըլլար, որովհետեւ գործարանաւորութիւնը ենթարկուած է հարկաւոր օրէնքներու եւ կը վարի լիովին բնասասական սահմանաւորումով մը, ազատութիւնը եւ հետեւաբար բարոյական խորհրդածութիւնը՝ անշատ պիտի ըլլար մեր կեանքէն. ահա հոս է բուն շահեկանութեան գաղափարը որ կապուած է այս տարրին:

Տեսնենք ուրեմն թէ ի՞նչ դրական փաստեր կը կարծուի թէ կարելի է յառաջ բերել, հաստատելու համար որ մեր մէջ կայ բնասասական ուժերէ անշատ կարողութիւն մը, ինքնակամ գործունէութեան, ազատ կառքի, անձնական գիտակցութեան նախատարր մը, մէկ խօսքով հոգեկան ուժ մը, ինքն իսկ աղբիւրն ու վախճանը գործադրանաւորական հաւաքութիւն, կեդրոնական եւ սկզբնական պատճառը մեր գիտակից գործերուն՝ որ, եթէ գոյութիւն ունի նոյնպիսի յատկութիւններով, ընդունակ պիտի ըլլայ բարոյական խորհրդածութեան եւ պիտի կրնայ յուսալ որոշ ճակատագիր մը մտքմտին բարոյական հանգամանքին համար:

Եթէ ակնարկ մը նետենք մարդկային մտքի պատմութեան վրայ, ամենամեծ իմաստասէրներու զրեթէ բոլորն ալ կը դաւանին հոգեպաշտական վարդապետութիւնը, զանազան ձեւերով: Յիշենք անոնցմէ գլխաւորները, ոչ թէ կրթիւնը համար անոնց հեղինակութեան վրայ, այլ առաւել ակնաբեր մը նետած ըլլալու համար հարցին պատմականութեանը վրայ — Հնութեան մէջ բոլոր յոյն հոգեկաւոր փիլիսոփաները՝ Սոկրատես, Պլատոն (1), Արիստոտէլ (2) եւ Պլոտին (3) (Plotin): Հռոմէ մէջ Կիկերոն (4) եւ Սենեկա (5). արդի ժամանակ-

(1) Մեծ իմաստասէր յոյն (427-347 Ք. Ա.), Սոկրատի աշակերտը եւ Արիստոտէլի վարժապետը:

(2) Մեծ գիտուն եւ իմաստասէր յոյն (384-322 Ք. Ա.), ուսուցիչն ու բարեկամը Մեծն Աղեքսանդրի:

(3) իմաստասէր յոյն, պետը Աղեքսանդրեան զրպրոցի (205-270 Յ. Ք.):

(4) Մեծ ճարտասան լատին (107-44 Ք. Ա.):

(5) իմաստասէր Լատին Քս. Ա. դարուն:

ներու մէջ Ժէ. Դարու զրեթէ բոլոր իմաստասէրները՝ Տէքարթ, Պոպուէ (1), Բասգալ, Ֆենեկոն (2), Մալքարանշ (3), Լայպնից՝ յիշելով միայն անոնք որ ֆրանսերէն գրած են:

Նիւթապաշտական հակումներ ունեցող մեծ իմաստասէրներն են, Յունաց մէջ՝ Լեվկիպոս (4) եւ Դեմոկրիտէս (5) եւ իրենց աշակերտը Եպիկուրոս (6). Լատինաց մէջ՝ Լիւգրէս՝ թարգմանիչն ու հետեւողը Եպիկուրոսի. Ֆրանսայի՝ Ժէ. եւ Ժ. Դարու բազմաթիւ իմաստասէրներէն կամ բժիշկներէն՝ Կասանտի (7), Լամէթրի (8), տ'Օլպաի (9), Հելվէգիուս (10), Գապանիս (11), Պրուսէ (12), Ժամանակակից չափ մը գիտուններ ու իմաստասէրներ՝ մանուկեղ Գերհարդտ մէջ, ուր Պ. Պիլաներ (13), քանի մը տարի կայ, աւելի ամբողջական եւ աւելի վճռական նիւթապաշտութեան իր հաւատքը յայտարարեց:

Այս երկու ցունկերէն առաջինը արդարեւ ամենափայլունն է, սակայն ոչ մէկ փաստ կայ անկէ հանելի, վառ գի պիտի կրնայ ըստիլ թէ հոգեպաշտ իմաստասէրները իրենց համբաւը կը պարտին, իրենց վարդապետութեանը՝ հասարակաց համոզումներու հետ ունեցած համաձայնութեան, անոնք ունեցած են կերպիւ իւր իրենց ընթերցողներուն մասնակի բնազդը՝ իբր իրենց գաղափարակից. ահա ասո՛ր մանաւանդ կը պարտին անոնք իրենց

(1) Եպիկուպոս, մեծ ճարտասան, պատմաբան եւ իմաստասէր ֆրանսացի (1627-1704):

(2) Եպիկուպոս, մատենագիր եւ մանկավարժ ֆրանսացի (1651-1715):

(3) Քանտայ, խոր իմաստասէր եւ մեծ գրող (1638-1715):

(4) իմաստասէր յոյն իբր 50) տր Ք. Ա.

(5) իմաստասէր յոյն (470. Ք. Ա.):

(6) Հոգեկաւոր իմաստասէր յոյն, իրմէ է Եպիկուրեան վարդապետութիւնը:

(7) իմաստասէր ֆրանսացի (1592-1656):

(8) Բժիշկ եւ իմաստասէր ֆրանսացի (1709-1751):

(9) իմաստասէր ֆրանսացի (1723-1789):

(10) իմաստասէր ֆրանսացի (1, 15-1771):

(11) Բնագէտ բժիշկ (1757-1803):

(12) Նշանաւոր բժիշկ, (1772-1838):

(13) Ժամանակակից իմաստասէր Գերմանացի:

փառքն ու հեղինակութիւնը նիւթապաշտ
իմաստասէրները միւս կողմէ՝ կը ներշնչեն
հաւասար հիացում մը անոնց որ իրենց վար-
դապետութիւններէն հաճոյք կը զգան
Լիւզրէս սիրուն ոտանաւորով մը երգեց
Եպիկուրոսը եւ անոր փիլիսոփայութիւնը
Անցնինք հիմա ուրեմն անոնց պատ-
ճառարանութիւններուն, տեսնելու համար
թէ ի՞նչ կ'արժեն անոնք :

Հոգեպաշտութիւնը որուն՝ զաղալիւ-
րապաշտութենէ կամ քացարձակ հոգեպաշ-
տութենէ տարբեր փաստերը պիտի ներկա-
յացընենք, որ՝ կերպիւ իւրիւ տարամիւր-
ժում մը կը հանէ նիւթապաշտական պըն-
դուններուն զէմ եւ կը ջանայ հաստատու-
լու թէ հոգիին գոյութիւն, աւելի ճշմա-
րիտ է քան նիւթին, հաստատուինք կը մնայ
իր վարդապետութեան վրայ :

Բուն հոգեպաշտութիւնը կը հաստատէ
միայն հոգիին ու մարմնին իրարմէ որոշ
ըլլալն ու գոյակցութիւնը, մէկ խօսքով
մարդուն երկու բնութիւնը՝ կազմուած,
նիւթական ու տարածական տարրերէ որոնք
կը հաւաքուին կեդրոնական միջոցի մը
այն է հոգւոյն առաւելակշիռ ազդեցու-
թեան տակ : Ան հրաժարած է նոյն իսկ
առաջարկելէ ուրիշ շատ մը հարցեր զորս
կը յուզէր երբեմն : Օրինակի համար, ո՞րիւ
կուգայ հոգին երբ կը մտնէ մարմնին մէջ :
— Ի՞նչպէս եւ ե՞րբ կուգայ ան. — Ի՞նչ
կերպով կը միանայ մարմնին. — Ո՞ր
կը բնակի : — Ի՞նչպէս կ'ազդէ գործա-
րաններուն վրայ : — Ի՞նչպէս կը ստա-
նայ իր ազդեցութիւնը :

Միջին դարու մէջ կը պնդէին իմաս-
տասէրները լուծելու այս հարցերը, եւ Տէ-
քարգ, դարձեալ կը բնակեցընէր հոգին
նախազգային (pinale) բլթակին մէջ,
ուրկէ ան կը հաղորդակցէր արտաքինին
հետ կենդանական հոգիներու (1) միջնոր-
դութեամբ : Ասիկա, անլուծելի դժուարու-
թիւններով խճողել էր խնդիր մը որ թե-
րեւս արդէն վեր էր մեր ուժերէն :

(1) Այսպէս կը կոչուին այն «անտեսանելի, մե-
ծեւ եւ անօր փոքրիկ մարմինները որոնք կը կար-
ծուէին կազմուած ըլլալ ուղեղին մէջ, բաշխուած
ջիղերու միջոցաւ մարմնին ամէն կողմերը, եւ օժ-
տուած կենդանիին զանազան մասերը կենդանա-
ցընելու կարողութեամբ մը :

Այսօր մարդիկ կը միացնեն իրենց բոլոր
ճիգը մի միակ եւ յոյժ վճռական կէտի մը
վրայ : Այն է՝

Եւր, այսինքն գիտակից անձը որ ինք-
զինք կը ճանչնայ ներքնահայեցութեամբ,
որ ինքզինք կը վարէ կամքին միջոցաւ եւ
լուսաւորուած է բանականութեամբ, արդ-
եօք մեր մարմնին մէջ հաւաքուած նիւ-
թական ուժերու արգասիքն է, թէ առանձ-
նայատուկ եւ ուրիշ կարգի գոյացութիւն
մը ունի :

Ան այս հոգեբանութիւնը երեք տե-
սակ փաստեր յառաջ կը բերէ.

Ա. Գիտակցութեան ուղղակի վկայու-
թենէն հանուած փաստեր.

Բ. Եւրի եւ նիւթին յատկութիւննե-
րուն բաղդատական քննութիւնէն հանուած
փաստեր :

Գ. Արդէն մէջ բերուած եւ բոլորովին
ի նպաստ հոգեպաշտութեան եղած, ու բա-
րոյականին՝ նիւթականին վրայ տարած
յաղթանակը ցոյց առող կարգ մը իրողու-
թիւններէ հանուած փաստեր :

Թրգւ. Ֆրանս. ԳՐ. ԷՕԼՄԷՉԵԱՆ
(Շարունակելի)

ԹԵԼԱԳՐԻՉ ՊԱՏՄԱԹԻՒՆՆԵՐ

« ՈՐԵԼԻՑ ԸՄՊԵԼԻԲԻ ԻԻՐԱՒԱՆՁԻՐ
ԳԱԻԱԹԻՆ ՄԷՋ ՄԱՅՐՍ ԿԸ ՏԵՍՆԷԻ »

Նաւաղ մը հետեւեալը պատմած է բա-
րեկամներէս մէկուն.

«Երբ ես տասնը վեց տարեկան էի
հաղիւ, ու շատ մեծ փափաք ունէի նաւաղ
ըլլալու, այն օրը որ մօրմէս պիտի բաժ-
նուէի՝ ան մեր պարտէզին դուռին ըով
ձեռքէս բռնեց ու ըսաւ, — Եղուարդ, զաւա-
կըս, կ'ըսեն թէ — որովհետեւ ես ծով
տեսած չեմ կեանքիս մէջ — նաւազներու
կեանքի միակ փորձառութիւնը արեգու-
թիւնն է : Բու մօրդ ձեռքը չի ձգած խօսք
տուր ինծի որ ողիկից ըմպելի բնաւ պի-
տի չիմես :

«Ես ալ խոստացայ ու անկէ ետքը իբ-
րեւ նաւաղ գործի մտայ : Ծովի վրայ շատ

տեղեր պատեցայ ու գացի մինչեւ Հիւսիսային եւ Հարաւային Բեւեռները, բայց նաւագութեան քառասուն տարիներու ընթացքին՝ ոգելից ըմպելիքի իւրաքանչիւր գաւաթին մէջ մայրս կը տեսնէի, ճիշդ այնպէս ինչպէս կեցած էր մեր պարտէզին դուռին առջեւ: Ահա ատոր համար այդ բոլոր ժամանակի ընթացքին կաթիլ մը իսկ ոգելից ըմպելի չեմ խմած:»

Այս միակ խօսքի մը գորութեան հիանալի մէկ ապացոյցը չէ՞. բայց պատմութեան հազիւ կէսն է, կ'ըսէր բարեկամս, որովհետեւ նաւագը այսպէս շարունակած էր իր պատմութիւնը:

«Երէկ գործատեղիս մարդ մը եկաւ, որ քառասուն տարեկան մը կար, ու ինծի հարցուց. — Զիս կը ճանչնա՞ք: — Ոչ, պատասխանեցի: — Շատ աղէկ ըսաւ մարդը, բաւական տարիներ առաջ չոգենաւի մը մէջ ճամբորդած ատենս օր մը արեւցայ, ու դուք ալ նաւագապետ էիք այդ չոգենաւին մէջ, անոր համար զիս ձեր առջեւը բերին: Մարդիկ կը ծաղրէին զիս, վրաս կը խնդային, ոտքերովս մէկդի կը հրէին, դուք զիս ձեր խուցը առիք ու հոն թողուցիք մինչեւ որ արեւցութիւնս անցաւ. յետոյ հարցուցիք ինծի թէ մայր ունի՞մ: Ես ըսի թէ մայրս պզտիկութեանս մեռած է ու ես բաւ մը իսկ չեմ լսած անոր չորթներէն: Դուք ձեր մօր մասին խօսեցաք ինծի, ու պատմեցիք անոր ձեր պարտէզին դուռին առջեւ ձեզի ըրած պատուէրը ու ձեր ալ ըրած խոստումը. ահա՛ այն ատենէն ի վեր իսկ ձգած եմ ոգելից ըմպելի գործածելը ու շատ յաջողած եմ գործերուս մէջ: Հիմա շատ խաշոր ու գեղեցիկ նաւի մը նաւատէրն եմ. ու եկա՛մ ձեզմէ խնդրելու որ հաճիք երբեմն ինձ այցելել:»

Մօր անուշ մէկ խօսքը այդ պարտէզին դուռին առջեւ, ըսաւ բարեկամս, որչափ մեծ բարիք ու օրհնութիւն մը եղած էր այս նաւագին ու անոր միջոցով ուրիշ մարդու մըն ալ:

Հաստատեցի բարեկամիս խօսքը, միեւնոյն ատեն ես ալ կարողացայ յիշեցի մօրս անուշ խօսքերն ու գորովալուծ խնամքները:

Քաղեց ԳՐԻԳՈՐԻՍ

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ(1)

Դ.

— Եթէ մարդ փնտռէ Աստուծոյ կամքին արտայայտութիւնը, կը գտնէ. անիկա գտնէ այնքան յստակ եւ որոշ կ'ըլլայ, որքան յստակ է կռապոչտական զոհերու կամ թոչուններու թոհչրին միջոցաւ կատարուած զուշակութիւնը: Զեր մէջը իմաստուն մարդիկ ունիք, որ աստուածներու կամքը կը մեկնեն ձեզի՝ իրենց յատուկ ծանօթութիւններով, եւ զոհերուն մարմինէն եւ թոչուններու թոհչրէն հանուած նշաններով Մենք ալ ունի՞մք մեր իմաստուն մարդիկը, մեր երէցները, սր մեղի կը յայտնեն Հօրը կամքը՝ Քրիստոսի յայտնութեամբը, իրենց հոգիի զգացումովը, ուրիշներու խորհուրդովը, եւ մանաւանդ իրենց նմաններուն հանդէպ ցուցուած բացարձակ անձնութիւնովը:

— Այդ ամէնը շատ տարտամ է, ըսաւ Յուլիոս. օրինակի համար, ո՞վ պիտի ցուցնէ քեզ այն աղջիկն որու հետ պիտի ամուսնանաւ ինծի համար, հրը ամուսնանալու ժամանակն եկաւ, հրեք աղջիկներէ մէկը պիտի ընտրէի, որոնք ուրիշ շատերը կը գերադանցէին իրենց հիանալի գեղեցկութեամբ եւ մեծ հարստութեամբ: Հայրս կուտար հաւանութիւնը՝ ատոնցմէ ո՞րն ալ ընտրէի: Այդ երեքին մէջէն Եւլալիան ընտրեցի, որովհետեւ ամէնէն սիրունը երեւցաւ ինծի: Այդ բոլորը շատ լնական կերպով տեղի ունեցաւ: Բայց քու ընտրութիւնդ ո՞վ պիտի վարէ:

— Հարցումիդ ուղղակի պատասխանելէ առաջ նախ պէտք է ըսեմ քեզի թէ մեր կրօնքին մէջ բոլոր այրերն եւ բոլոր կիները հաւասար են, ֆիզիքական թէ բարոյական տեսակէտով. մեր ընտրութիւնը սահման չունի ուրեմն:

— Ասիկա աւելի կը դժուարացնէ, սակայն, կատարուելիք ընտրութիւնը, առարկեց Յուլիոս:

(1) Շարունակութիւն 22րդ Թիւէն սկսեալ

— Թող առե՛ր որ կրկնեմ քեզի ինչ որ մեր երէցները կ'ըսէին ինծի անցեալ օր, հեթանոս եւ քրիստոնեայ ամուսնութիւններու միջեւ գոնուող տարբերութեան մասին: Հեթանոսը իր կիներ կ'ընտրէ այն աղջիկներուն մէջէն, որոնք կարելիութեան սահմանին մէջ ամենէն աւելի հաճոյք եւ նիւթական գոհացում կը հայթայթեն իրեն: Ընդհակառակն, այդ կարգի պնձնական ընտրութիւն մը չի չփոթեցներ Քրիստոնեան, լաւ եւս՝ ձեզ առաջնորդող նկատումները երկրորդական աստիճանի վրայ կը մնան Քրիստոնեային համար, որուն առաջին մտածումն այն է որ իր ամուսնութիւնը Աստուծոյ կամքին հակառակ չըլլայ:

— Բայց ամուսնութիւն մը ինչպէս Աստուծոյ կամքին հակառակ կ'ըլլայ:

— Եթէ ես մոռցած ըլլայի Եղիականը զոր ժամանակաւ միասին կարգադրեց եւ ուսումնասիրեցինք, ատիկա կրնար ներքի ըլլալ ինծի համար, բայց դուն որ փիլիսոփաներու եւ բանաստեղծներու մէջ կ'ապրես, իրաւունք չունիս զայն չյիշիլու: Ինչ է Եղիականը, եթէ ոչ մեղանշումը Աստուծոյ կամքին դէմ՝ ամուսնութեամբ: Մկնէպս եւ Պարիս, Աբելլէս եւ Հեղինէ, Ակամմնոն եւ Խրիսթիս բոլորն ալ տարբերն են նկարագրութեանը այն ազդեցութեան, որոնք ամուսնութեան մասին Աստուծոյ կամքին հակառակով մարդոց վրայ կը տեղան:

— Ինչ բանի մէջ կը կայանայ այդ հակառակութիւնը:

— Այն իրողութեան մէջ որ հեթանոսը յանձին իր կնոջ կը սիրէ ոչ թէ մարդկային կակը, այլ անձնասէր հաճոյքը զոր նա կը հայթայթէ իրեն: Այդ հաճոյքը ձեռք բերելու համար է որ կ'ամուսնանայ: Քրիստոնեայ ամուսնութիւն մը այն ատեն միայն կարելի է, երբ այն իր սրտին մէջ ունի իր նմաններու սէրը, եւ այն կինը զոր կ'ուզէ իր կեանքին կցորդ ընել, առարկան է այդ ևղբայրական սիրոյն: Անկարելի է տուն մը շինել առանց հիմի, նկար մը գծագրել առանց նախապէս պատրաստելու կտաւը. նոյնպէս զգայական

սէրը չի կրնար երբէք արդարացի, բանաւոր եւ տեւական ըլլալ, եթէ իրեն հիմ չունի սէրն ու յարգանքը զոր ամէն մարդ պարտաւոր է ցուցնել իր նմաններուն: Աւստիկ այն ճշմարիտ հիմերը որոնց վրայ հաստատուած է Քրիստոնեայ ընտանիքը:

— Եւ սակայն տակաւին լաւ չեմ հասկնար թէ ինչ պատճառով Քրիստոնեական ամուսնութիւն կոչածդ կը վտարէ Պարիսի զգացած սիրոյն տեսակը:

— Ձեմ ըսեր որ զուտ սէրը չընդունուիր Քրիստոնեական ամուսնութեան մէջ: Ընդհակառակն ամուսնութիւնը լաւ հասկցուած եւ սուրբ չըլլար, երբ այդ սէրը անոր մէկ տարրը չկազմէ: Բայց պէտք է որ միակ կնոջ մը համար զգացուած այդ սէրը սպաննէ մեր մէջ եղբայրական սէրը, զոր պարտաւոր ենք ունենալ բոլոր մարդկային արարածներուն վրայ: Միակ կնոջ մը համար զգացուած այդ սէրը, զոր երգած ու քարոզած են բանաստեղծները, ինքնին շատ լաւ բան մը ըլլալով հանդերձ, այլեւս արժանի չըլլար սէր անուանին, եթէ իրեն հիմ չունի ամբողջ մարդկութեան համար զգացուած սէրը: Անիկա իբրեւ անասնական պարզ կիրք մը, յաճախ ատկութեան կը փոխուի: Ինչ որ ընդհանրապէս Նրոս կը կոչուի, անասնութեան կը դառնայ, երբ մարդուն կը ներշնչէ ամօթալի մտածումը բռնութիւն ի գործ դնելու այն կնոջ վրայ զոր սիրած ըլլալ կը կարծէ, նոյն իսկ երբ զայն կ'ենթարկէ այնպիսի տառապանքներու որոնց դաժնութիւնը պիտի տեսէ իր կեանքին չափ երկար ժամանակ: Մարդ կրնայ պնդել թէ կը սիրէ կին մը զոր կը տառապեցնէ այսպէս: Հազուադէպ չէ բռնութիւն ի գործ դրուիլը՝ հեթանոս ամուսնութիւններու մէջ: Յաճախ երիտասարդ մը կ'ամուսնանայ աղջկան մը հետ որ զինքը չի սիրեր եւ կամ — ինչ որ աւելի գէշ է — ուրիշ մը կը սիրէ, եւ զայն սոսկալի չարչարանքներու կ'ենթարկէ, պարզապէս գոհացում տալու համար բիրտ կիբքի մը, զոր սէր անունով կը զբոգարէ: Ձեմ գիտեր քու ամուսնութեանդ մանրամասնութիւնները, բայց ինծի համար բացայայտ է թէ այն


բոլոր ամուսնութիւնները որոնց հիմն է անձնական հաճոյքը, գծաութեան տեսուկան աղբիւր մըն է, կարելի չէ մարդիկն եւ անասունները միասին սնուցանել առանց վէճի եւ պայքարի. անոնցմէ իւրաքանչիւրը իրեն համար կ'ուզէ լաւագոյն կտորը. եւ որովհետեւ ամէնուն պէտք եղածին չափ լաւագոյն կտորներ չկան, մարդ եւ անասուն կը կռուին իրարու ձեռքէ յափշտակելով զայն. եթէ նոյն իսկ աղմկալից կերպով երեւան չգայ պայքարը, դարձեալ իրական բայց թաքուն կերպով գոյսւթիւն ունի ան. Այսպէս է հեթանոս ամուսնութիւններու համար ալ, սա ծանրացուցիչ պարագայով որ ամուսնական միութիւններուն մէջ գծաութեան առարկան մարդկային արարած մըն է. Ուստի եւ վէճը եւ ատելութիւնը կը ծագին նոյն իսկ ամուսիններուն միջեւ:

— Բայ, ի՞նչ պիտի ընես, որպէս զի իրարու հետ ամուսնանալ ուղղի կրկու անձերը միմիայն մէկգլխի սիրեն: Եւ որովհետեւ ասիկա անկարելի է գրեթէ, մարդ եթէ ողջմտութեամբ գործել ուզէ, պէտք է ընտելանալ, ինչպէս կ'ընէ Բերիտանեաներու մեծ մասը: Դուն ամուսնի ես, եւ հաւանաբար սինպէս պիտի մընաս մինչեւ վերջը: Կարելի՞ է երեւակայել որ աղջկան մը հետ ամուսնացող մարդ մը երբեք զրաւած չըլլայ ուրիշ կնոջ մը սիրտը, եւ կամ, հնար է միտքէ անցնել որ ամուսնոտնուող պարիքին հասնող աղջիկ մը սիրային զգացումներ արթնցոյցած չըլլայ երիտասարդի մը սրտին մէջ: Ի՞նչ պէտք է ընէր Հեղինէ:

— Մեր երէցը, Սիրիլ, դիտել կուտայ որ հեթանոս աշխարհին մէջ, այրերը առանց վայրկեան մը անդրադարձաւոր իրենց նմաններն իրենց եզրօր պէս սրբելու պարտականութեան վրայ, առանց բռնաւ բան մը ընելու: այս զգացումը զարգացնելու համար, միակ բան մը կը փնտռեն, — կնոջ տարփանքը: Ահա ասոր համար է որ իրենց մէջ ամէն Հեղինէ, կամ Հեղինէի նմանող ամէն կին կիրքը կ'արթնցնէ շատ մը այրերու սրտին մէջ: Մրցակիցները կը կռուին անասուններու պէ՛ռ էգի մը համար: Հեթանոս ամուսնութիւնը առաւել կամ նուազ պայքար մըն է ամուսիններու միջեւ:

ԼԷՈՆ ԹՈՒՍԹՈՅ

(Շարունակելի)



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

Հնգամսեայ Տեղեկագիրը

Նախորդ չարթուն ստացանք Հ. Բ. Ը. Միութեան վեցերորդ շրջանի առաջին հինգ ամիսներուն տեղեկագիրը, որմէ գոհութեամբ կը տեղեկանանք 13 նոր մասնաճիւղերու կազմութիւնը, Ամերիկայի, Եւրոպայի եւ նոյն իսկ Թուրքիոյ զանազան քաղաքներուն մէջ: Ասոնց չորսը՝ Ուէօդ, Հոպոքըն, Բլէվլէնտ, Շիքսօ եւ Թրոյ (Ամերիկա) կազմուած են նախաձեռնութեամբ Տ. Մուշեղ Եպիսկ. Սերոբեանի: Մասնաճիւղեր կազմուած են նաեւ Հոնայթիսթիլ, Ֆիշպըրը եւ Լին (Ամերիկա), Լոնտոն, Պրիւսէլ, Այնթապ, Կիւրին, Փարզին, եւ Դահիւրէի մէջ ալ՝ Տիկնայց օժանդակ Մասնաժողով, պատուակալ ատենապետութեամբ Տիկին Առաքել պէյ Նուպարի: Ասոնցմէ զատ, նախապէս հիմնուած վեց մասնաճիւղերու (Տրապիզոն, Սամսոն, Ատանա, Միտլպօրօ, Բաթըրաֆն, Ֆիլատէլֆիա) տեղական ժողովները վերջնապէս կազմուած են, իսկ տանեւ վեց Մասնաճիւղեր ալ (Դահիւրէ, Էրզրում, Սըվազ, Պրուսա, Սելանիկ, Ուսղըր, Նիւ-Պրիթէյն, Իսդ-Բէյմպրիճ, Պրիճուօղլըր, Բրօվիտէյն, Բիչմընտ, Երզնկա, Մանչէսթըր, Վիեննա, Պոսղըն եւ Պրաքղըն) մասամբ կամ ամբողջովին վերանորոգուած են: — Միութիւնը այդ շրջանին նպաստներ զրկած է՝ 100 Անգլ. ոսկի, Կիլիկիոյ Շնորհ. Կաթողիկոսին կարօտ եւ արժանաւորագոյն այրիներու եւ որբուհիներու ամուսնութեան համար: 33.3 Անգլ. ոսկի՝ Արֆայու գիւղի 500 տէճնիւմ հողին յաւրակից ծախքերու, եւն. համար՝ 35՝ Սըվազի Ազգ. Հիւանդանոցին, 15՝ Բրօքսթիկ Հայ կաթոլիկ վարժարանին, 70՝ Ազգ. Հայունհաց ընկ. Կարինի վարժուհիներին, եւ 50՝ Դպրոցասէր Տիկնանց ընկ. վարժուհիներին՝ որոշ պայմաններով, 70՝ Բողոմոր (Երզնկա) գիւղախմբին կեդրոն Տանցիկի, Դավազ գիւղի, նաեւ Կիւրինի, Բիլիսի (Հայէպ), Կէտիկ Մատէնի (Խարբերդ) մէջ Ազգ. վարժարաններ հաստատելու կամ գանուածներուն նպաստելու համար, եւ

վերջապէս 87,9,4 ոսկի՝ 9 թերթի 112 բա-
ժանորդագրութիւն՝ զանազան կրթական
հաստատութեանց ի նպաստ: Ղրկուած
նպաստներու գումարը եղած է աւելի քան
460 անգլ. ոսկի: Ազգէ գառ առաջագործած
է ամառնային արձակուրդին 1605 ոսկիի
նպաստ ղրկել. — 450՝ Մուշի հողադուրկ
համայնքներու, 300՝ Զարսանգի հողա-
դուրկ համայնքներու, 200՝ Հաճընի մէջ
արհեստագործութիւնը ծաղկեցնելու, 200
կիլիկիոյ համար բժշկ-պատուիրակի մը
վեցամսեայ շրջանին վարձքն ու ծախքը
(գեղը մէջը ըլլալով), 200՝ Մուշի եւ շրջ-
ակալքի համար գիւղատնտեսական պատ-
ուիրակի մը վարձքն ու ծախքը, 20՝ Քէ-
նասլի Հայ-բողոքական վարժարանին, 15՝
Հայ-կաթոլիկ վարժարանին եւ 220՝ զա-
նազան նպատակներու համար: — Նոյն
հնգամսեայ շրջանին կարեւոր նուէրներ
եւ սքանչեւած են, ի մէջ այլոց Բրօվիտէնսի
Տուգասարի Ուսումն. ընկերութիւնէն՝
երկրորդ անգամ ըլլալով՝ 100 անգլ. ոսկի,
Տիար Տիրան Փիլիպպոսեանէ՝ 50 Եգիպտ.
ոսկի՝ 36 ոսկի տարեվճարով, Կ. Շէրիտ-
ճեան պէյէն՝ 400 հատորի Հափ իր զիրքերը՝
2000 ֆր. արժողութեամբ, Տիար Պետրոս
Բէլթէկեանէ (2օդ Մարդուան)՝ տասը տօ-
նիւմ հող, « Հալիկ ֆընտ »-ի Գահիրէի
Մասնաձեւըն աւանդ՝ 8544 Ե. Ղ.ի գումար
մը, երջանկայիշատակ Իզմիրլեան կաթո-
ղիկոսի հոգեհանգստեան առթիւ փոխան
ծաղկեպսակի հաւաքուած գումարէն 2647
եգիպտ. ղշի թերհաշիւ մը՝ « Իզմիրլեան
որբ »-ի մը պատասպանութիւն համար, Քէ-
սասլի Տ. Պողոս Քէնյ. Աթիկեանէ՝ իրեն
սեփական գետին մը, որուն վրայ՝ աղջկանց
վարժարան մը կառուցուած է, Տիար Լեւոն
Սէմէրճեանէ 550 անգլ. ոսկի սպահովա-
գրութեան քոյիս յիպեռե մը, բոֆմերը
վճարուած, եւ ի գէպ մահու հատուցանելի,
թատերական ներկայացումէ 278 Ե. ոսկի:
Նոյն հնգամսեայ շրջանին Միութեան
Վարչ. Ժողովը տուած է օգտակար որո-
շումներ: Ի մէջ այլոց որոշած է ներկայ
շրջանին սկիզբէն ստիպողական նպատակնե-
րու յատուկ պահեստի գումար մը գոյա-
ցնել՝ վար գնելով գանձուած եւ հկամուսի

հասոյթին անցուած անդամավճարներուն
5/6-ին հարկերին տասը, տեղական մաս-
նաժողովներու յատուկ ներքին կանոնա-
գիր մը պատրաստել, հիմնած է Միութեան
« Կեդր. գրադարանը » Գահիրէի մէջ, սկըզ-
բունքով ընդունած է « Միութիւն » անու-
նով առայժմ անօրեայ օրկանի մը հրա-
տարակութիւնը, որոշած է աւելի լաւ
սահմանի վրայ օգնել կարօտ հողագործ
համայնքներու՝ բայց ոչ նպաստի դրու-
թեամբ որ պարկեշտ մշակը ծուլութեան
կը վարժեցնէ, բժշկ-պատուիրակի մը ղըր-
կել Կիլիկիա, Մշոյ եւ շրջակայից հողա-
գործութիւնը զարգացնելու եւ հողագործ
համայնքներուն գրասլւս օգնելու նպատա-
կով՝ գիւղատնտես մը ղըրկել իօրեւ պատ-
ուիրակ, շնորհակալութիւն գիր ուղղած է
Տ. Մուշեղ Եպս. Սերոբեանի որ Ամերիկա
կատարած ճամբորդութեան առթիւ ինք-
նաբեր յօժարութեամբ Միութեան ծաւա-
լումին կ'աշխատի, Ռուսիոյ եւ մասնաւո-
րապէս Կովկասի մէջ Միութեան ծաւալ-
ման աշխատելու եւ մասնաժողովներ հիմ-
նելու համար հարկ եղած պայտօնական
գրերն ուղղուած են ծանօթ հրապարակա-
լիք Տիար Հ. Առաքելեանի, Էւն. Էւն.:

Այդ շրջանին մէջ Միութիւնը ստացած
է զնահատական զրեւ՝ Պատր. Տեղապահ
Բարձր. Տ. Վահրամ Ս. Արքեպ. Մանկու-
նիէ, Էւն. եւ Միութեան Ծրդ տարեդարձին
եւ այլ առիթներով հանդէսներ սարքուած
են՝ Դահիրէ, Նիւ Եօքը, Պոլիս, Պոսթոն,
Հալէպ, Վան:

Տեղեկագիրը կը վերջանայ, ծանուց-
ուելով թէ Միութեան կոնսուադրին գեր-
մաներէն եւ հայտառ ու թրքատառ օս-
մաներէն թարգմանութիւնները տպագ-
րուած ըլլալով փափաքողներու տրամա-
գրութեան տակ կը դրուին: Լոյս տեսած
է նաեւ Միութեան Ծրդ շրջանի Յրահա-
տեղեկագիրը, եւ հայերէն տպագրութիւնն
եւս կ'աւարտի ամսոյս վերջը:

Միութեան գերազանցօրէն շինիչ ու
բարեբար նպատակը, եւ իր գործառնու-
թեանց ամենափոքր մանրամասնութիւն-
ներն իսկ ժողովրդեան ծանօթացնելու
փութկոտութիւնը պարտք կը զնեն ամէն
սրտի տէր Հայու վրայ՝ փութով անդա-
մակցիլ անոր, եթէ անդամակցած չէ տա-
կաւին:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՊԱՐՍԿԱՆԱՅՈՑ ՎԻՃԱԿԻՆ ԿԵԱՎԵՈՒՆ
աւելի տագնապալի կը դառնայ: Օրաթիւ-
թիւրը, մասնաւորապէս Տփղիսի թերթերը
ամէն օր նորանոր լուրեր կը բերեն ան-
լուր խժգոնութեանց եւ կեղեքումներու:
Նախորդ բռնակալ Շահին եւ օրուան կա-
ռավարութեան քուռն պայքարին հետե-
ւանօք անխնայութիւնը կը տիրէ, նաեւ
բացարձակ անսպասելիութիւն: Քիթ եւ
ականջ կտրելու վայրերի գէպերը պակաս
չեն: Ամենէն աւելի սարսափի տակ
են Հայերը, որոնք ամէն օր եւ քիչ մը
ամէն կողմ մասնակի սպանութեանց եւ
խժգոնական գէպերու ենթակայ կ'ըլլան,
եւ միշտ սարսափի տակ են ընդհանուր
կոտորածի: Այս սարսափին շարժումիւ
եղած է Հայերու նկատմամբ Պարսիկ տը-
գէտ ամբողջին մէջ տարածուած համազո-
ւոր թէ յեղափոխութեան դատին ծառա-
յած են: Տփղիսի Հորիզոն թերթը այս
առթիւ ուշագրաւ խմբագրականի մը մէջ
հաստատելէ ետքը թէ Պարսկահայերը
ընդհ. կոտորածի մը երկիւղէն զերծ կը
գտնուէին դարէ մը ի վեր, խորհուրդ
կուտայ Պարսկաստանի մէջ գործող ընդ-
հանրապէս եկեղ. Հայ յեղափոխական
տարրերուն՝ շատ զգուշաւորութեամբ գոր-
ծել, հասկնալ կացութիւնը, եւ պատաս-
խանատուութեան զգացմունքի առջեւ կըշ-
ռել, կշռադատել եւ այնպէս վճռել իրենց
ընկիւրք: Ո՛րքան արդարացի դիտողու-
թիւն: Մէկ քանի տար գլուխներու յան-
գուզն ընթացքին հետեւանօք ամբողջ ժո-
ղովորդ մը ագէտ ու մոլեւանդ խումանի
մը սարսափին ենթարկել, իբրեւ միւս լուրջ
եւ մեծ պատասխանատուութիւն հրաւի-
րող հարց, որուն վրայ պէտք է շատ
զղուշաւոր շրջահայեցութեամբ մը մտած-
ուէր:

*, Կը լսուի թէ Խառն ժողովը մաս-
դիր է Պարսկաստանի ներկայ տագնապու-
թի վիճակին մէջ շիջում մը կատարել Օսմ.
կառավարութեան մօտ, որպէս զի պաշտ-

պանէ Պարսկաստանի մէջ գտնուող օսմ.
հպատակ Հայոց շահերը, եւ իր պաշտպանու-
թեան տակ առնէ զանոնք:

ԲԱՅԵՐԴԻ առաջն. փոխանորդը Պատ-
րիարքարան կը հեռագրէ թէ Քսանթայէն
բռնի առեւանգուած եւ իսլամացուած հայ
կնոջ մասին եղած բողոքներուն անխնայի
մնալէն գիւղացիները զայրացած՝ եկեղե-
ցիին վրայ իսլամական դրօշ պարզեր եւ
եկեղեցիին բանալին եւ սրբազան անօթ-
նիւրը գրաւելով քահանաները արտաքսե-
ր են: Առաջն. փոխանորդը անմիջական
կարգադրութիւն մը պահանջած է, բայց
մինչեւ այս տողերը գրուելը գեռ չենք
գիտեր թէ ինչ կարգադրութիւն եղած է:

ԽԱՌՆ. ԺՈՂՈՎԸ ԴՆՃԻ ՆԻՍՏԻՆ ԻՄԵՋ
նկատելով որ ուղղակի իր հակակշիռն առկ
Երուսաղէմ ելմանց քննիչ մը զրկելը նոր
աշխատութիւն մը կը բարդէ իր վրայ,
մեծամասնութեամբ որոշեց Երուսաղէմի
եկեղեցիի Հոգաբարձութեան համար զոտ
մարմին մը կազմել, եւ Տ. Գրիգորիս Ծ.
Վ. Պալագեանէ եւ Հայկ Խօճասարեան եւ
Յարութիւն Շահրիկեան էֆ.ներէն կազ-
մուած մասնախումբի մը յանձնեց նոյն
Հոգաբարձութեան պաշտօնը սահմանելու
համար հրահանգ մը ի գիր առնելու հոգը:
Չարսանճապի առաջն. Տեղապահ Տ. Հա-
մազասպ Վ. Ժողովուրդին դառն վիճակը
պարզած, եւ հոգալին խնդրոյն անլոյծ մը-
նալէն ու քուրդ պէյերուն առկէ քաջա-
լերուած իրենց հարստահարիչ ընթացքը
շարունակելէն յաւանատելով ժողովրդ-
եան Օրթոտոքս Եկեղեցիին դիմելու հա-
ստատ մատարութիւնը ծանուցած եւ դար-
ման խնդրած ըլլալով, Խառն ժողովը
որոշեց նոր թաղրիրով մը գիւղացիներու
իրաւանց պաշտպանութիւնը խնդրել Բ.
Դուռնէն:

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԸ շատ կարեւոր եւ
զնաշատելի որոշում մը տուեր է ԴՆ. օրը
ի նկատ առնելով սեռային գէշ հիւանդու-
թեամբ վարակուողի մը պարագան, որ
հաղիւ քանի մը ամսուան կենսակցութիւնէ
ետքը իր հիւանդութիւնը փոխանցած է
հետը ամուսնացող խեղճ աղջկան մը, այդ-
պիսի ցուալի հետեւանքներու տեղի չի

տալու, եւ ամուսնալուծեց չարժանիքներէն գոնէ մէկը վերցնելու համար, որոշած է որ այսուհետեւ ամուսնական հրաման ստանալու համար ներկայացողները պարտաւոր ըլլան առողջական վկայագիր ալ ցուցնելու:

ՌՈՒՍՍԿԱՆ Նովոյե Վրեմյա թերթը Հայոց կաթողիկոսութեան վրայ կարգ մը յօդուածներ հրատարակելով, ի մէջ այլոց նաեւ կարեւոր կը համարի կաթողիկոսական աթոռը էջմիածինէն Բեղերսպուրկ փոխադրել: Աւելորդ է ըսել թէ այդ թերթը իբր ուռւ որոշ շրջանակի մը մտայնութեան արտայայտութիւնը, լուրջ վրտանգ մը մատնանիշ կ'ընէ, եւ եթէ ոչ անմիջական՝ գէթ հեռաւոր ապագային գործադրութեան գրուելիք ծրագիր մը կը պարզէ:

(Բիւզանդիոն)

ԱՏԱՆԱՅԻ ՀՐԿԻՋՅԱԼՆԵՐԸ. — Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Ատանայի հրկիզեալներուն կողմէ Ուէսթըրն ապահովագրական ընկերութեան գէմ բացուած դատը քր ութը ինը ամիսէ ի վեր կը շարունակուէր, վերջացած է, եւ Առեւտր. Ա. Դատարանը ի նպաստ հրկիզեալներու վճռած է: Ինչ որ ամէնէն կարեւորն է, Անգլ. հրկատարանի ներկայացուցիչները հաստատած եւ ստորագրած են դատարանին վճիռը, որով Անգլ. ընկերութեան ուրիշ բան չի մնար ընել, եթէ ոչ անմիջապէս վճարել Ատանայի մէջ իր ըրած ապահովագրութիւններու 15,000 ոսկիի գնումը, որուն 5000 ոսկին ազգ. կալուածներ: Ուշագրաւ է որ անցեալ տարի Փոանս Իւնիօն ընկերութեան գէմ տրուած նմանօրինակ վճիռ մը չէր ստորագրուած Փոանս: Ներկայացուցիչներու կողմէ, ինչ որ մեծ հարուած մը տուած է Ֆոանսացիներու ասպետական ոչւոյն եւ Իւնիօն ընկերութեան Արեւելքի մէջ ստացած վարկին ու համարման: Այս առթիւ ուրախութեամբ կ'իմանանք որ զրեթէ միւս բոլոր ապահովագրական ընկերութիւններու մէջ համաձայնութիւն մը գոյացած է Ատանայի հրկիզեալներու ի նպաստ կարգադրութեան մը յանգելու համար:

Տ. ՇԱՀԷ ՎՐԴ. Գասպարեան, Հալէպէն եւս Գաւառ. Ժողովոյ անդամոց միաձայնութեամբ առաջնորդ ընտրուած է թէեւ, բայց վերջին լուրեր կ'ըսեն թէ Ատանայի առաջնորդութիւնը նախընտրած է: Միւս կողմէ թղթակից մը կը գրէ թէ Տ. Շահէ Ծ. Վ. մտադրութիւն ունի ի մօտոյ Ամերիկա մեկնել, այնտեղ Աստուածաբանական ուսմանց հետեւելու համար: ՎՐԻՊԱԿ ՄԸ սպրդած էր անցեալ շաբաթուան Տաճարի «Ազգային կեանք» թափնին մէջ. ուր Ազգ. Ժողովոյ վերջին նիստին վրայ խօսուելու առթիւ, Հմայեալէ Էֆ. Խոսրովեանի ընծայուած է այն գրութիւնը որով Օսման վաչայի պատժութիւնը կը պահանջուէր, մինչ ատրկա ներկայացուած է Հմ. էֆ. Արամեանցի կողմէ: Գրչի պարզ վրիպակի մը արդիւնքով եղած այս սխալը կ'ուզուէր, որ հացում տուած ըլլալու համար Կոնսակ կուսակցութիւնը խմբագրապետին, որու ֆիզերուն զպեր է այս սխալը, իրմէ խլուած տեսնելով փառքի դափնեպսակ մը: Կը ցաւինք այսպիսի մտայնութեան մը վրայ, որ տակաւին կը տիրէ տեսակ մը անձերու վրայ, որոնք ածուս ազգասիրութեամբ մը ժողովրդականութիւն չանել կ'երազեն: Համոզելու համար Պ. Արամեանցը թէ այդ վերիպակը խեղաթիւրուած մը արդիւնքը չէ, փութանք ըսել որ Ազգ. Ժողովոյ նոյն նիստին ներկայ չէր թերթիս անօրէն-խրմբագիրը, եւ օրաթերթերէ՝ ամիսի բաղուած մը ըրած էր: Աւելցնենք թէ Հմայեալէ Էֆ. Արամեանցը բարեկամ կը ճանչնանք մեզի, մինչ Հմայեալէ Էֆ. Խոսրովեանի հետ ու եւ է ծանօթութիւն չունինք, ոչ ալ անկէ ու եւ անկալութիւն: Տաճարի անօրէն-խմբագիրը ոչ իր քսանամեայ խմբագրական կեանքին եւ ոչ ալ իր հնգամեայ քահանայութեան միջոցին ակընկալութիւններու, ձեռնառութիւններու զիջած չէ բնաւ, եւ կը հրաւիրենք Կոնսակ Պատ. խմբագրութիւնը՝ հրապարակաւ ետ առնելու նոյն թերթին մէջ գործածուած «խեղաթիւրում» բառը:

Արտօնատէր ՀՄԱՅՆԱԿ ԲԶՆՅ. ԷՔՍԷՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ

ԶԱՐՄԱՅՐ ԲԶՆՅ. ԿԷԶԻԿԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՂՋԿԱՆՅ ԳՈԼԷՃ, ՍԿԻՏԱՐ

Ամերիկեան աղջկանց Գոլէճը կը բացուի Սեպտ. 14ին: Այս Գոլէճը Թուրքիոյ մէջ միակ հաստատութիւնն է որ կանանց բարձրագոյն կրթութիւն կուտայ: Այս վարժարանին մէջ կ'աւանդուին՝ Գիտութիւնք, Պատմութիւն, Ուսողութիւն, Գրականութիւն, Մանկավարժութիւն, Փիլիսոփայութիւն եւ Լեզուներ:

Գոլէճը չորս տարուան դասընթացք մը ունի: Անդգիբերէն չգիտցողներուն զիւրութեան համար մասնաւոր դասարան մը բացուած է այդ լեզուին ուսուցման համար: Սկիւտար Օր. Տայեանի, Ատտիազարի աշուհեաց վարժարանի եւ ուրիշ համահաւասար հաստատութեանց շրջանաւարտները Գոլէճի առաջին կարգը կ'ընդունուին տաւանց ընդունութեան:

Գոլէճի Նախապատրաստական Գծիւնը կը գտնուի Առնաւուտգիւղ: Կ'ընդունուին միայն այն աշակերտուհիները որոնք տասը տարեկանէն վեր են:

Դիշերթիկները պէտք է օր առաջ դիմեն եւ 2 ոսկի աւանդ ձգելով ապահովեն մուտքը առաջինայ տարուան համար:

Դիմել Տնօրէնութեան Առնաւուտգիւղ ամէն երեքշաբթի օրերը: առտուան ժամը 10—12 : 3—5

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՀԱՅ. Ս. ԵԿԵՂԵԹԻՑ, բազմաձայն մշակմամբ Ռ. Ղ.ի — Ա. Տէր ողորմեայ (Արի Աստուած եւն.) քառաձայն խառն խումբի համար: 30 կոպեկ:

Բ. Հանգսեան (ննջեցելոց կարգի քառաձայն խառն խումբի համար. 60 կոպեկ)

Հրատարակուած են եւրոպական երկտող նօթագրութեամբ, եւ յարմար են թէ երգելու առանձին խմբամասերու համար, եւ թէ նուագակցելու դաշնակի կամ երգէտի վրայ:

Նոյն հեղինակը հրատարակած է նաեւ՝ Օրհներգ Հայրապետական «Բարէ»,

քանի հրաշափառ» ... քառաձայն խառն խմբի համար: 40 կոպեկ:

Դիմել Մոսկուա. — Moscou, (Russie). Mousicaln ia Torgovlia «P. Urguenson», Neglinniy Proyesd, No. 14:

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ

(ԵՕԹՆԱՄԵԱՅ ԻՏԱՏՈ)

ԳԴՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՃԵՐԵԿԵԱՅ, ՍԿԻՏԱՐ

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՎԱԿԵՐԱՑՈՒԱԾ ԳԵՐԻՏԵՆ

Հաստատութիւններ, որոնց արգիւնքները գնահատուեցան մեծապէս, եւ որոնց վկայականները վաւերացուեցան օրն օրին կրթական նախարարութիւնէն, ամէնէն մեծ երաշխիքն են թէ իրենց նպատակին կը ծառայեն լիովին, թէ կը սորվեցնեն բացի Հայերէնէ, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգլիերէն եւ Գերմաներէն լեզուները, եւ գիտական եւ իմաստասիրական ուսումնիրը, տալով հայկական ընտիր դաստիարակութիւն մը երկսեռ Հայ պատանիներու, պատրաստելով զանոնք ամէն առարկէի եւ համալսարանական ուսման, ձեռամբ 30է աւելի փորձ, հմուտ եւ մասնագէտ ուսուցիչներու:

Ի մօտոյ պիտի բացուի համալսարանական դասարան մը, մանկավարժական, գիտական, առեւտրական եւ լեզուական ճիւղերու: Բնան թիւը բաւական պիտի սեպուի բանալու համար առաջին դասարանը: Վերաբացումը 1 Սեպտ. Եշ. դասերը պիտի սկսին 5 սեպտեմբեր, Բշ.:

Աշակերտաց ընդունելութեան համար գիմել ամէն ուրբաթ, ուղղակի Տնօրէնութեան, աղջկանց վարժարանը, առաւօտէն մինչեւ իրիկուն, ու Գշ. եւ Եշ. օրերը ժամը (Ը. Թ.) 10էն վերջ Սիւմպիւլի իւան, Հիմնադիր-Տնօրէնին դասաքերքերուն եւ բառարաններուն կեդրոնատեղին:

Հիմնադիր-Տնօրէն

ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

5—4

ՍՏԱՅՈՒՄԻ ԳԻՐՔԵՐ

ԺԻՐԱՅՐ.— Յեղափոխական առաջնաշին կենսագրութիւնը (1881-1884)։ Տ. Գեորգ Ծ. Վ. Ասլանեան, Ռոստոմոյի եռամսհուն առաջնորդը, իր նկարուն եւ զգայուն ոճով պատկերացուցած է կեանքը յեղափոխական առաքելալին, իր ամէն կողմերով, մանկութենէն սկսեալ։ Գործը զարգարուած է բազմաթիւ պատկերներով, որոնք կը ներկայացնեն ժիրալը, իր բնատենկան պարագաները, Մուրատը, իր ուսուցիչները, քաղաքներն ուր ծնած, ապրած ու գործած է, եւն.։ Երկրորդ հատորով մը հնգյնակը առաջագրած է նկարադրել ժիրալի գործունէութիւնը՝ Երզնկայի, Կիլիկիոյ, Կեսարիոյ եւ Անկիւրիոյ եւն. մէջ, մինչեւ իր կախաղան թարծրանալը Հրատը. Գրեւծնեան զրատան Գին ճու կէս զրշ.։

ԻՆՆՍՈՒՆ ՎԵՑ.— Հրատարակուցան Բ. եւ Գ. հատորները Սմրատ Բիւրատ էֆ.ի այնքան յուզումնալից եւ հետաքրքրաշարժ վէպն, ուր հայկական արհաւիրքի կեանքը կը պատկերացուի Խննսնէն եւ Վեց թուականի արիւնատ օրերուն։ Վեպ ըլլալէ շատ աւելի, վաւերական պատմութիւնն է հարստի շրջանին։ Դին իւրաքանչիւր հատորին 6 զրշ.։

ՆՕԹԵՐ ԵԳԵՊՏՈՄԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՒՆ ՎՐԱՅ.— Դահիրէի Առաջնորդարանին քարտուղար Տիար Ն. Մ. Աղաքարով կաւերնոր ծառայութիւն մը կը մատուցանէ հայ կեանքին, հատորի մը մէջ ամիսներով Եգիպտոսի պատմական հայ գաղութին վրայ ասկէ առաջ եւրոպական հրատարակութեան մը մաս կազմելու համար

գրի առած նօթերը, ներկայ առիթն աւելի ճոխացնելով եւ ամբողջացնելով զանոնք։ Լուրջ աշխատութիւն մը, ուր կը պատկերացուի Եգիպտոս գաղթող հայերու կեանքն ու գործունէութիւնը՝ հին դարերէ սկսեալ մինչեւ մեր օրերը։ Գին 6 զրշ. Եգիպտ.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

ՈՍՏԱՆԻ կուսակցայ մեծ պարբերագիր, արուեստներու, գրականութեանց եւ գիտութեանց։ Հիմնադիր խմբագիրներ՝ Միք. Շամտանճկան եւ Տիգրան Չէօկիւրեան։ Հրատարակուեցաւ երրորդ թիւը, ճոխ պարունակութեամբ։ Տարեկան բաժնեգին 40 զրշ. ձեռքէ կը ծախուի 12 զրշ.։

ՇԱՆԹ, կիսամսեայ հանդես գրական եւ գեղարուեստական, պատկերազարդ, հրատարակուեցաւ 4րդ. թիւը՝ գրական շահեկան նիւթերով, Տարեկան բաժնեգին 40 զրշ. հատը 2. զրշ.։

ԳԷՈՐԳ ՄԵՍՐՈՊ

ՈՒՐ ԱՐՏՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՁԱՆԱԿՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Ամեն կողմէ գնահատուած)

Փութացէք գնել ռոտֆէտե կէսէն աւելին սպառած է արդէն — 254 էջ, 30 պատկեր, մէկ քարտէս, եւն. Գին 10 զրշ., 2 ու կէս ֆր. 1 բուրլի, կամ կէս տօլար։ 5է աւելի գնողներուն գոհացուցիչ գեղջ։ — Դիմել հեղինակին՝ Ատաբազար, և Պոլիս՝ բոլոր գրավաճառներուն։ 6—3

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Սուրբան-Հանաւ Մօշա-Թաշը, Թիւ 16

Կ ՊՈԼԻՍ